ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան Տիար Նախագահ,

Հարգալից զգացումներով Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ մեր ջերմագին բարի մաղթանքները Նոր տարվո առթիվ՝ մաղթելով Ձեզ մշտանոր հայրենանվեր կորով ու ներշնչանք՝ շարունակելու Ձեր առաքելությունը Ձեզ հատուկ իմաստությամբ՝ հաղթահարելու մեր հայրենիքի առաջ ծառացած ծանր դժվարությունները և առաջնորդել մեր երկիրը դեպի խաղաղություն և բարօրություն:

Ողջ լերուք զորացյալ Սուրբ Հոգվով:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՐԱՆՏ ԲԱԳՐԱՏՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան Տիար Վարչապետ,

Գոհություն Աստուծո, որ Նոր տարվո լուսաբացին առիթն ունենք Ձեզ հղելու Մեր բարի մաղթանքները քաջառողջության և անսպառ եռանդի՝ Ձեր հայրենանվեր առաքելության ճանապարհի վրա: Թող Տերը Ձեզ մշտապես զորացնի, որպեսզի կարողանաք հաղթահարել այն բազում դժվարությունները, որոնք ծառացած են Ձեր և Մեր հայրենի կառավարության առաջ:

Նոր տարին թող իր հետ բերի մեր ժողովուրդին բարօրություն և խաղաղություն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ԼՅՈՒԴՎԻԳ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան Տիար Խաչատրյան,

Անհա Նոր տարին, 1994 թվականը, որ հուսով ենք, թե մեր ժողովրդին պիտի բերի լուսաբացը դժվարությունների հաղթահարման և ըղձալի բարօրություն և խաղաղություն մեր անկախ Մայր Հայրենիքի:

Աղոթում ենք նաև Ձեր արևշատության և ընտանեկան երջանկության համար:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին շնորհավորանքի հեռագրեր: